№ 225 ԿԻՐԱԿԻ, 3 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1918
ՔԱՌԱՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ, 3 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 225

Նոյեմբերի 1-ից մինչև դեկտ. 1-ը Թիֆլիսում 10 ռուբլի։
Առանձին համարները Թիֆլիսում և գաւառներում 50 կ., երկաթուղային կայարաններում 70 կոպ.։
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Tiflis Rédaction „Mschak"
Соломоновская, 21.
Խմբագրատան հեռախօս № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են՝ իւրաքանչիւր տողատեղին 70—40 կոպ.։
Հասցէն փոխելու համար պէտք ուղարկել թէ հին հասցէն և թէ 1 ռուբլի։

Զառէնիր Յովհաննիսեան, Աննիկա Սիմէօնեան, Արամ Եազըրիչ Բաղդասարեանները իրանց զաւակներով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր թանկագին ամուսնու, երկրորդն իր սիրելի սկեսրայրի, երրորդն իր անմոռանալի հօր և վերջիններն իրանց սիրելի պապի՝

Եգոր Ղարիբեան ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑԻ

մահվան մասին, որ տեղի է ունեցել Կիսլովոդսկում։ Կիրակի, ամսիս 3 ի առաւօտեան ժամը 12 ին Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում կատարվելու է պատարագ և հոգեհանգիստ։
1000. 2—2

Մագթաղինէ և Կարապետ Զանրաթեանները իրանց զաւակներով յայտնում են բարեկամներին և ազգականներին առաջինն իր թանկագին եղբօր և երկրորդն իր աներորդու՝

Եգոր Ղարիբեան ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑԻ

մահվան մասին, որը տեղի է ունեցել Կիսլովոդսկում։ Կիրակի, ամսիս 3 ին, առաւօտեան ժամը 12-ին, Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում կատարվելու է պատարագ և հոգեհանգիստ։
1001. 2—2

Կարապետ և Տիրուհի Ցարմանեանները՝ իրանց զաւակներով—Ծնանիտ, Փառանձեմ և Արմենուհի, Արտաշէս և Նուարդ Պետրոսեանները, Յովհաննէս և Վարդանէ Իսահակեանները ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին ու ծանօթներին՝ առաջիններն իրանց թանկագին զաւակի, երկրորդներն իրանց սիրելի քրոջ, երրորդն իր քենու, իսկ չորրորդն իր եղբօր որդու՝

Վարդանոյշ Կարապետեան ՑԱՐՄԱՆԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ ծանր և կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, նոյեմբերի 3-ին, առաւօտ. ժամը 10-ին, բնակարանից ([illegible] 31) դէպի Վանքի մայր եկեղեցին։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։
1007. 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ
Երկուշաբթի, նոյեմբերի 4-ին 1918 թ.
կը ներկայացնէ
Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ
ԴԱՏԱՍՏԱՆ
Դրամա 5 արարուածով։
Այս պիէսը արժանացել է Հայ Դրամատիկ Ընկերութեան մրցանակաբաշխութեան ժիւրիի մրցանակին։
Սկիզբը ժամը ճիշդ $7\frac{1}{2}$ ին —o— Տեղերի գները սովորական են։
Կասսան բաց է ամեն օր, ժամը 12—3-ը և 6—8-ը։
Ռեժիսեօրական Խորհուրդ
Հայ Դրամատիկ Դերասանների Միութեան Խորհուրդ

Հայոց Դրամատիկական Ընկերութեան Խորհուրդը
յայտնում է Ընկերութեան անդամներին, որ նոյեմբերի 9-ին, շաբաթ օր, երեկոյեան ժամը 6 և կէսին Ընկերութեան բնակարանում (Сололакская ул. № 20) հրաւիրված է
Արտակարգ ընդհանուր ժողով։
Օրակարգն է
Զեկուցում, հաշուետուական և ընտրութիւն խորհրդի (6 անդամի և 2 փոխանդամի)
տա. (շ.) 1005. 2—1

Սրբունական թատր. նախկին արտ. և երգեցողութեան հմուտ
Ուսուցիչ
ԲԷԳԼԱՐ ԱՄԻՐՋԱՆ
փոխադրվելով նոր բնակարան—(Սօլոլակ—Լերմոնտովսկայա փ. № 26), տալիս է երգեցողութեան դասեր՝ իտալական շկօլայով և մեթոդով։ Մասնագէտ ձայնի կոնսերվացում և ուղղում. զարգացում ձայնի, լսողութեան, շնչառութեան և ռիթմայի։ Օպերային, օպերետային և համերգային [illegible] գեղարուեստական դաստիարակութիւն, անսամբլ։ Նոյնպէս հրաւիրվում են ձայն ու բեմական ձիրք ունեցող անձինք, որոնք կը ցանկանան կատարելագործվել ու մասնակցել ապագայ հայկական գեղարուեստական օպերային թրուպաներում։ Պարապմունքը սկսված է սեպտեմբերի 16-ից։ Ընդունելութիւնը շարունակվում է ամեն օր, բացի տօն և կիրակի օրերից 10—3 և 5—8-ը։ Լերմոնտովսկայա փողոց, տուն № 26 (Սօլոլակ)։
(Ա եր.) (հ. կ.) 986. 3—3

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՄԲԻ Աւագների Խորհուրդը
հրաւիրում է ցանկացողներին կապալով վերցնելու Հայկական Ակումբի ամառային շէնքում կից գտնվող ԹԱՏՐՈՆԸ, պայմանով՝ յարմարեցնել այդ ձմրան սեզոնի համար կապալառուի հաշուին։
Առաջարկութիւնները կապալավճարի ու այլ պայմանների ցուցմունքով հասցէագրել Հայկական Ակմբի Աւագների Խորհրդին Միքայէլեան փող. № 73.
Յայտարարութիւնները պէտք է ներկայացնել մինչև նոյեմբ. 8-ը։
ն. 3 ին։ տա. 2—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
վերադառնալով վերսկսում է ներքին հիւանդութիւնների—թոքային և սրտի ընդունելութիւնը՝ իր բնակարանում և լոյսի ու էլեկտրականական կաբինէտում, Հետազօտութիւնը և բժշկութիւնը X ճառագայթներով։
Ամեն օր՝ 9—1 և 5—7 ժամը երեկ.։
Բեբուտովսկայա փ., № 23. Հեռ. 7—92.
տա. (ա. օ.) 100—33

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետրոգրադի սիֆիլիսի. հիւ. կլինիկայի, ընդունում է մաշկային միզասեռ., վեներական և սիֆիլիս հիւանդութիւն ունեցողներին։
Առաւօտ. ժամը 10—12.
Երեկ. » 5—7.
Սեմեոնովսկայա փ. 18 (Վորոնցովի արձանի մօտ։ Բնակարանը Սեմեոնովսկայա, 16։
տա. (և. հ. շ. կ.) 100—19

ԲԺԻՇԿ
Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։ Հիւանդների համար անհրաժեշտ անալիզները կատարվում են [illegible]։
Ընդունելութիւնը երկ. ժ. $5\frac{1}{2}$—7
Հասցէ՝ Бебутовская, № 55.
տա. (օ. մ.) 504. 100—49

ԲԺԻՇԿ
Կ. Յ. ՂԱԶԱՆՃԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ։ Ընդունում է ամեն օր առաւ. ժ. 10—12-ը, երեկ. ժ. 5—7-ը, Ստարո-Աբազսկի պերեուլոկ № 7։
տա. (ա. օ.) 877 100—25

ԲԺԻՇԿ
Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆ
Նախկին ասիստենտ Բեռլինի համալսարանի կլինիկաների
Մասնագէտ մանկաբարձութեան, կանանց հիւանդութիւնների, նրանց միզասեռական և վեներական ախտերի («606» և «914»), էլեկտրաբուժում արգանդի և ձուարանների խրոնիկական բորբոքումների։ Ամեն օր, երեկ. ժամը 5—7-ը, կիրակի օրերը առաւ. ժ. 10—11-ը։ Հասցէն՝ Օլգինեան փողոց, Մելիք Ազարեանի տուն, № 3, բն. 12, հեռախօս № 16—71։
տա. (և. հ. շ. կ.) 100—26

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Սիֆիլիս (ներարկ. «914»), վեներական, միզասեռական և մաշկի հիւանդութիւններ. էլեկտրաբուժում. հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, ժամը 12—2-ը, 5—6-ը։ Կանանց համար ժամը 2—3 ը ցերեկվայ։
Հասցէն՝ Սօլոլակ, Բեբուտովսկայա փող. № 33 (անկիւն Պասկեվիչի փող.)։
Հեռախօս 11—75.
տա. (հ. կ.) 1395 100—88

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
Մ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆԻ
Ոսկեայ և [illegible] ատամներ, արհեստական ատամներ՝ ֆարֆորից և ոսկուց (առանց քիմքի), վինտով ատամներ և այլն։
Ընդունելութիւնը՝ ցեր. 10—2-ը ժ.
Երեկոյեան 4—6 ժ.
Կիրակի օրերը 10—12 ժ.։
Լերմոնտովսկայա փողոց № 1, մուտքը Ստարո-Աբազսկի պէրէուլոկից։
տա. 885. 100—13

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՎԱՆՑԵԱՆ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ։ Ընդունելութիւն ամեն օր՝ 12—1-ը ցեր., 6—7 երեկոյեան։ Շաբաթ օրերը ձրի ընդունելութիւն չքաւորների համար։
Абасъ-Абадская пл. д. № 1.
տա. (ա. օ.) 976. 100—8

ԲԺԻՇԿ
Վ. Կ. Մարգարեան
Ներքին և ջղային հիւանդութիւններ. Բժշկութիւն և դաստիարակութիւն յետամնաց, ապուշ, անհարմար երեխաների։ Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւ. ժամը 9—11-ը
երեկ. ժամը 5—7-ը
Абасъ-Абадская пл. уголъ Могнинск. ул. № 3.
տա. (և. հ. կ.) 757. 30—24

Բացված է
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺԱՐԱՆ
Մշտական մահճակալներով
ԲԺՇԿԱՊԵՏ
Ի. ԴՕՆԽԻՆԻ
Նախկին երկար-ժամանակեայ ասիստենտ Պարիզի և Վիէննայի համալսարանների աչքի հիւանդութիւնների կլինիկաների, ընդունում է
Աչքի հիւանդութիւններ
ունեցողներին ցերեկվայ ժամը 9-ից մինչև $11\frac{1}{2}$-ը և երեկ. 4—$5\frac{1}{2}$-ը։ Միքայէլեան փող. 141 («Ապոլլոյի» մօտիկ)։ Սենք և վիրահատ. կարօտ հիւանդները ընդունվում են [illegible]։
տա. (ա. օ.) 849. 100—24

ԲԺԻՇԿ
ԳՐ. Յ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
Նախկին ասիստենտ Ժընէվի համալսարանի կլինիկաների և պրօֆ. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բուժարանի։
Ներքին և կանանց հիւանդութիւններ. մասնաւորապէս վեներական, միզասեռական և կաշւի ցաւերի։ Հին ու նոր սիֆիլիս և նրա կոմպլիկացիաները. Ներարկում պրօֆ. Ehrlich-ի 606»-ի և «914»-ի պրեպարատների։ Էլեկտրաբուժում։
Ընդունելութիւն առ. ժ. 10—12-ը, երեկ. 5—7-ը. կանանց համար 12—1-ը։
Կիրակի օրերը ձրի ընդունելութիւն ցեր. ժ. 11—12-ը։
Կիրոչնայա փ. № 11.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԷՆՑԻԱՆ

I

Վրաստանի կառավարութեան նախաձեռնութեամբ տեղի պէտք է ունենայ անդրկովկասեան պետութիւնների կոնֆերէնցիա, որին մասնակցելու հրաւիրվում են նաև հիւսիսային լեռնականների միութիւնների ներկայացուցիչները։

Կոնֆերէնցիայի գումարման նպատակն է հարթել փոխ-յարաբերութիւնները, վիճելի սահմանային խնդիրները, մասնակի որևէ համաձայնութիւն չը կայացնել ի վնաս միւսի և համերաշխութեամբ ու փոխադարձ համաձայնութեամբ հանդէս գալ համաշխարհային կոնգրէսում։

Որքան էլ կոնֆերէնցիայի գումարման գաղափարը համակրելի է ինքնըստ ինքեան և նպատակայարմար թըւում, սակայն միմիայն մի պայմանով, եթէ այդ տեղի ունենայ նորմալ և խաղաղ պայմաններում։ Ներկայ քաղաքական մշուշապատ մթնոլորտը այնքան էլ վստահութիւն չէ ներշնչում, որ կովկասեան նորածին պետութիւնները կարող են փոխադարձ հաւատով և անկեղծ բարեացակամ սիրով և կամ անկողմնապահութեամբ վերաբերվել միմեանց։ Աւելացրէք դրան և մօտաւոր անցեալի դառն փորձանքները, այն ամեն աղէտները, որ թափվեցին հայերի գլխին, փախստականական և գաղթականական չը լուծված հարցերն և այլն և այլն։ Արտաքին քաղաքական անորոշ կացութիւնն էլ դրդում է շատ շրջահայեաց լինել և խուսափել արագօրէն վճռելուց այնպիսի քաղաքական խոշոր խնդիրներ, որոնց մէջ շահագրգռված են մեծ պետութիւնները։

Դիմենք կոնֆերէնցիայի քննութեան առաջարկված չորս կէտերին։

Անկախութեանց փոխադարձ ճանաչումը։ Նախ քան մենք միմեանց անկախ ճանաչելը, անհրաժեշտ է, որ մեզանից հզօրները մեզ անկախ ճանաչեն։ Քանի որ այդ բարդ և կընճռոտ խնդիրը չէ լուծվել մեծ պետութիւնների միջև, մենք ինքներս մեր անկախութեան հետ միմիայն խաղեր ենք սարքում։

Վիճելի խնդիրների ու նաև սահմանային վէճերի լուծումը։ Ոչ մի այդ տեսակ կոնֆերէնցիա չէ կարող ձայների առաւելութեամբ սահմանային և կամ այլ վիճելի հարցերի որոշում տալ. առաջարկվում է արբիտրաժ, սակայն արբիտրաժը պէտք է ունենայ հեղինակութիւն և վարկ ու յենվի վերջ ի վերջոյ ույժի վրա, իբրև դատական մարմին, որ իր վճիռը կարող է գործադրել։ Այդպիսի արբիտրաժ կարելի է կազմել մեծ պետութիւնների ներկայացուցիչներից։ Ուրեմն այս դէպքում ևս առանց նրանց մեր արածը ունայն կանցնի։

Փոխադարձ պարտաւորութիւն՝ ոչ մի պետութեան հետ համաձայնութիւն չը կայացնելու ի վնաս համագումարին մասնակցող պետութիւններից որևէ մէկի։ Սա ամենասայթաքեցուցիչ կէտն է։ Եթէ վերջին չորս տարվայ և նոյն իսկ վերջին [illegible] քաղաքական իրադարձութիւնը մարդ վերյիշէ, թէկուզ թռուցիկ կերպով, կարող է մանաւանդ հայն ասել, թէ վստահել կարող է իր դրացիներին…

Վերջին կէտն է՝ համերաշխօրէն և փոխադարձ համաձայնութեամբ հանդէս գալ համաշխարհային կոնգրէսում։ Ո՞ւմ հետ համերաշխօրէն հանդէս գալ։ Չէ՞ որ եթէ օրինակ ունենանք անդրկովկասեան սէյմը, որն այժմ հանդէս է գալու կոնֆերէնցիայի դիմակով, տեսանք թէ նա ուր տարաւ անդրկովկասեան ժողովուրդների համերաշխ (sic) գործունէութիւնը…

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ. ՄԻՋՈՑՈՎ

—o—

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 31 հոկտ.—Աւստրո-ունգարական պաշտօնագիրը յանուն Վիլսոնի ստացվեց շվէդական դեսպանատան մէջ։

ԲԵՐԼԻՆ.—Վիլհելմ կայսրը մայրաքաղաքում մի քանի շաբաթ մնալուց յետոյ մեկնեց գլխաւոր շտաբը։

ՓԱՐԻԶ.—Զագրեբում ցոյցերից յետոյ ամենուրեք իջեցրել են աւստրիական երկգլխանի արծիւներն ու ունգարական գերբերը։

Բեռլինի լրագիրների ասելով, գլխաւոր բանակի քաղաքական բաժանմունքը վերացված է և գրաքննութիւնը բոլորովին ոչնչացված է։

Դանիական գործարանների բանւորների ներկայացուցիչները կոչ հրատարակեցին պատերազմի դէմ և յօգուտ ընդհանուր հաշտութեան։

ԲԵՐԼԻՆ.—Մեր հակառակորդի զինադադարի պայմանները մինչև օրս չեն ստացվել ու հազիւ թէ ստացվեն մերձաւոր օրերում։ Ասում են նոյն իսկ, թէ համաձայնութեան պետութիւնները զինադադար յետաձգում են մինչև Ամերիկայում նոյեմբ. 5 ին կայանալիք ընտրութիւնները։

Համաձայն «Բեռլ. Տագ.»-ի հեռագրի, Բուդապեշտում պայթել է յեղափոխութիւն։ Ազգային խորհուրդը իր վրա է վերցրել կառավարութեան ֆունկցիաները։ Զօրքը և ոստիկանութիւնը հպատակվել են նրան։

ՎԻԷՆՆԱ.—Կայսրի կարգադրութեամբ, աւստրո-ունգարական նաւատորմը յանձնվել է հարաւ-սլաւոնական ազգային խորհրդին Ագրամում։

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ.—Նոյեմբերի 1-ից վերացված է պետութեան մէջ նախնական գրաքննութիւնը։

Գերման-աւստրիական ազգային խորհուրդը բանաձևով դէմ է Անդրաշիի վերջին պաշտօնագրին, որ ուղարկվեց Վիլսոնին։

Սոց. դեմ. Էլլենբոգէնը բողոքեց աւստրիական կառավարութեան անջատումը Գերմանիայից իբրև ամօթալի խախտումն հաւատարմութեան։

ՎԻԷՆՆԱ.—Ինչպէս հաղորդում են լրագիրները, Բոհեմիայում և Մորավիայում պետական հաստատութիւնների յանձնումը չեխ-սլովակների ազգային կոմիտէին կատարվել է առանց թիւրիմացութիւնների ու վէճերի։ Հանդիսաւոր ցոյցերը շարունակվել են առանց որևէ ընդհարման։ Պրագայում բանւորների գործադուլը, չեխական նոր կառավարութիւն կազմելու ժամանակ, նոյնպէս անցել է հարթ, առանց թիւրիմացութիւնների։ Այսօր ամենուրեք վերսկսվում են աշխատանքները։

Գերմանական մամուլի տեղեկ. հոկտ. 31-ից։

Գերմանական-բոհեմական պատգամաւորները հաւաքվեցին տարբեր աւստրիական հողաբաժնում և կազմեցին ժամանակաւոր սահմանադրութիւն Գերմանական Բոհեմիայի համար մինչև գերմանական Աւստրիայի վարչութիւնը դեմոկրատական սկզբունքներով։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՋԱՏ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊՈԼԻՍ, 30 հոկտ.—Թիւրքիան վարում է անջատ բանակցութիւններ երկու տեղ—Բեռնում և Միտիլենա կղզում։ Բանակցութիւններին իբրև միջնորդ մասնակցում է անգլիական գեներալ Տաունսենդը։

ԱՒՍՏՐԻԱՅԻ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿԱՊԻՏՈՒԼԱՑԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

ԼԻՈՆ, 1 նոյեմբ.—Իտալական զօրաճակատի վրա աւստրիական զօրքը լիակատար կազմալուծված վիճակում է։ Պիավան ամբողջովին անցել են իտալական զօրքերը, ֆրանսիական, բրիտանական և ամերիկեան զօրամասերը. Թշնամին կորցրել է արդէն 50,000 գերի և աւելի քան 300 թնդանօթ։ Դա անուղղելի պարտութիւն է, որով և բացատրվում է Աւստրիայի բուռն ցանկութիւնը՝ կայացնելու անմիջապէս զինադադար։

Լրագիրներն ընդգծում են Թիւրքիայի անձնատուր լինելը ներկայ պատերազմի վախճանի տեսակէտից, ինչպէս և արևելքի ապագայ վիճակի տեսակէտից։ «Պտի Պարիզիէն»ը քննելով միաժամանակ անցեալն ու ապագան՝ ասում է, թէ գերմանական տիրապետութեան ծրագիրը արևելքում ֆիասկօ կրեց։

ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՀՌՈՄ, 30 հոկտ.—Այստեղ գումարված հայ ժողովրդի ներկայացուցիչները հանդէս են գալիս յօգուտ հայկական անկախ պետութեան ստեղծման։

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՄՈՒԼԻ ԲԻՒՐՈՅԻ ԲԻՒԼԼԵՏԷՆՆԵՐԻՑ

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 30 հոկտ. — Սլաւոնիայում անկարգութիւնները ուժեղանում են. Նասից քաղաքը այրվում է. կալուածատիրական դղեակները թալանի են մատնված. դասալիք զինւորները թալանում ու այրում են գիւղերը. երկաթուղային հաղորդակցութիւնը դադարեցված է։ Ունգարացիք չը կարողացան իրանց ձեռքում պահել Ֆիումէ քաղաքը, որը յանձնված է կրօատներին։ Ունգար-կրօատական սահմանագծի ամբողջ երկարութեամբ անկարագրելի յուզում է տիրում. ունգար ազգաբնակութիւնը երկիւղ է տածում, որ կրօատները ներս կը խուժեն ունգարական երկիրը, ուստի և խնդրում են զօրք ուղարկել։ Զագրէբից հաղորդում են, որ հազարաւոր դասալիքներ ապաստան են գտել Սավա և Դրավա գետերի միջև գտնվող լեռնանցքներում, դասալիքները թալանում են քաղաքներն ու գիւղերը, կանգնեցնում են մթերակիր և ապրանքատար գնացքները։ Դասալիքները շատ լաւ կազմակերպված են, նրանց ղեկավարում է մի յատուկ բիւրօ։ Զագրէբի վաճառականներն ու բանկիրները երկիւղ ունեն, որ դասալիքները կը գրաւեն Զագրէբը։

ՎԻԵՆՆԱ, 31 հոկտեմբերի.—Աւստրիացի գերմանների ազգային ժողովը մշակել է ժամանակաւոր սահմանադրութիւն։ Կառավարական իշխանութիւնը յանձնված է գործադիր կօմիտէին, որ բաղկացած է երեք նախագահներից և 20 անդամներից։ Այդ կօմիտէն յուշագիր է ուղարկել Վիլսոնին, զեկուցելով որ կազմվել է գերման աւստրիական անկախ պետութիւն, և պահանջելով որ սրա ներկայացուցիչներին թոյլատրվի մասնակցելու հաշտութեան բանակցութիւններին։

ՊՐԱԳԱ, 31 հոկտեմբերի.—Չեխական կառավարութիւնը յայտարարել է չեխական պետութեան սահմանադրութիւնը։

ՊԱՏԵՐԱԶՄ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆ, 1 նոյեմ.—Արեւմտեան զօրաճակատ։ Կրօնպրինց Ռուպրեխտի զօրաբանակ։ Ֆլանդրիայում թշնամին նորից վերսկսեց իր ուժեղ յարձակումները։ Գլխաւոր հարուածը ուղղեցին անգլիացիք և ֆրանսիացիք Դէյնզէի և Շէլդայի միջև։ Դէյնզէից հարաւ նրանք խուժեցին մեր դիրքերը։ Մնացած ռազմաբեմերի վրա մեր զօրքերը վանեցին թշնամուն։ Կորտրիկ-Ուտէնաարդէ երկաթուղագծից հիւսիս կռւող զօրքերը օրվայ ընթացքում ետ քաշվեցին Նոկէրէի ուղղութեամբ, որպէս զի չը կտրեն իրանց կապը հարեան զօրամասերի հետ։ Կռիւները վերջացան երեկոյեան դէմ Դէյնզէ-Կրուշուտէմ խճուղուց արևմուտք և Նօկէրէ-Կէրկովա լեռնագագաթների մօտ։

Շէլդի գաշտավայրում թշնամին շարունակում է աւերել գիւղերը։ Տուրնէ Վալանսիէն և Պէրուվէլց քաղաքները ենթարկվեցին անգլիական ռմբակոծութեան։

Գերմանական կրօնպրինցի զօրաբանակ։ Շատօ-Պորսիէնից հիւսիս-արևմուտք, Էնի լեռնագագաթների վրա թնդանօթամարտը ընդունեց ահռելի չափեր։ Թարմ ուժերով թշնամին շարունակեց գործել ուժեղ յարձակումներ Խէրսիից հիւսիս-արևմուտք։ Այդ յարձակումները նորից աջողութիւն չունեցան և արժեցան թշնամուն մեծ կորուստներ։

Գալվիցի զօրաբանակ։ Մաասի արևելեան ափում ամբողջ օրը ուժեղ թնդանօթային գործունէութիւն էր։

Հարաւ արևելեան զօրաճակատ։ Գերման զօրքերը ետ քաշվեցին դէպի Դանուբի հիւսիսային ափը՝ Բելգրադի և Սէմենդրիի երկու կողմում։ Դանուբն անցանք մենք առանց թշնամու կողմից արգելքի հանդիպելու.

(Երեկոյեան)։ Լիսսի զօրաճակատի վրա, Դէյնզէից հարաւ մենք խուսափեցինք թշնամու յետագայ յարձակումներից՝ նահանջելով դէպի Շէլդա։ Վալանսիէնից հարաւ հակայարձակումներով մենք կանգնեցրինք անգլիացիների յարձակումները։ Զավրզանց ծայրայեղ կռիւ է Էնի զօրաճակատի վրա և Արգօնների ու Մաասի միջև Վուզիէրի երկու կողմում, Շատօ-Պորսիէնից հիւսիս արևմուտք և Էնի լեռնագագաթների վրա ֆրանսիացիների յարձակումներն աջողութիւն չունեցան, բացի այն, որ թշնամին մտաւ մեր զօրագծերը։ Ամերիկացիների յարձակումները վանվեցին Շամպինէուլ-Բայօնվիլ-Էնկրէվիլ զօրագծի վրա։

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԻԵՆՆԱ, 1 նոյեմբ.—Վենետիկի հովտում մեր զօրքերը թողնում են իրանց դիրքերը։ Հարաւ-արևելքում մեր գլխաւոր ուժերը հասան Դանուբի հիւսիսային ափին։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ, 1 նոյեմ.—Զինադադար կնքելու հետևանքով թշնամական գործողութիւնները դադարեցված են բոլոր զօրաճակատների վրա 1918 թ. հոկտ. 30-ից։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Հոկտ. 30-ին ուղարկելով ձեզ Հայաստանի կառավարութեան նախագահի անուան հեռագրի պատճէնը՝ այն թէ նոյեմբերի 10-ին կօնֆերենցիա գումարելու հարցի առթիւ, նկատի առնելով որ յիշեալ հեռագիրը անկարելի եղաւ հասցնել ըստ պատկանելոյն, որ Երևանի ռադիօ կայանը ահա երրորդ օրն է չէ պատասխանում Թիֆլիսեան ռադիօյին, ուստի արտաքին գործերի մինիստրութիւնը՝ մինիստրի կարգադրութեամբ՝ խնդրում է ձեզ առնել կարելի միջոցներ ձեզ յանձնվող հեռագրի բովանդակութիւնը ձեր կառավարութեանը յայտնելու։

Ահա այդ հեռագիրը.

«Երևան, Հայաստանի կառավարութեան նախագահին.

«Ձեր յայտնած համաձայնութեան առթիւ՝ վիճելի սահմանների խնդիրը համաձայնութեան ճանապարհով լուծելու մեր առաջարկին ի պատասխան, պատիւ ունեմ յայտնելու, որ այդ հարցը դրված է անդրկովկասեան կօնֆերենցիայի օրակարգի մէջ, որը նշանակված է նոյեմբերի 10-ին, և յուսով եմ կուղարկէք ձեր պատուիրակներին լուծելու, ի միջի այլոց, և այդ հարցը։

Ի. տ. արտաքին գործերի մինիստրի՝ երկրագործութեան մինիստր՝

Խօմերիկի

ԳԵՐՄԱՆ ԶՕՐՔԸ

Գեն. ֆօն Կրեսը Բերլինից ստացաւ մի հեռագիր, որի մէջ հաղորդվում է, թէ գերման զօրքերի մի մասը կարող է մնալ Թիֆլիսում ֆօն Կրեսի գլխաւորութեամբ, պաշտպանելու գերմանական հիմնարկութիւնները։ Իսկ մնացած մասերը պիտի մեկնեն Գերմանիա։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Թիւրքիան համաձայնութեան պետութիւններին առաջարկել է զինադադար, որի պայմանների համաձայն՝ գերման զօրքերը Թիւրքիայից պիտի դուրս բերվեն միայն համաեւրոպական հաշտութեան կնքվելուց յետոյ, երբ տեղի կունենայ և Դարդանէլի բացումը։

Թիւրքիայի այս առաջարկին դաշնակիցները պատասխանել են, որ Թիւրքիան անմիջապէս պիտի զինաթափ լինի, նաւատորմը, բանակը և գերման զօրքերը յանձնի իրանց, որից յետոյ միայն հնարաւոր կը լինի Թիւրքիայի հետ բանակցութիւններ վարել։

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԸ ԹՈՒՐՔԵՍՏԱՆՈՒՄ

Մոսկովեան տեղեկութիւնների համաձայն, ներկայումս Աշխաբադում գտնվում է անգլիական մի զօրախումբ 15 000 մարդուց բաղկացած։ Զօրախումբն եկել է Պարսկաստանի և Աւղանիստանի վրայով։ Անգլիացիների և բօլշևիկների միջև տեղի ունեցած կռւի ժամանակ բոլորովին աւերվել է Խիվան։ Գեղանկար քաղաքը դարձել է աւերակ։

Անգլիացիները հակախորհրդային ռուս զօրամասերի հետ միասին ամրացել են Սամարղանդում։ Բօլշևիկները նոր զօրքեր են տանում դէպի Սամարղանդ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Պարիզից հեռագրում են.

«Էլզաս-Լօթարինգիայի ընկերութեան նախագահը Կլէմանսօյին ուղարկեց մի նամակ, որով եռանդով բողոքում է զինադադար կայացնելու դէմ՝ առանց Էլզաս-Լօթարինգիան նախապէս դատարկելու և Ֆրանսիային ետ հանձնելու»։ («K. M.»)

◆ Աւստրօ-Ունգարիայում բնակվող ռումինները հաստատել են հիմնադիր ժողով Բուկովինայի ռումինական մասերը և Բանատի ռումինական շրջանը միացնելու և սեփական պետութիւն ստեղծելու նպատակով, որ կունենայ 4 միլիօն բնակիչ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

Մօտ օրերս քաղաքում բացվում է ֆրանսիական ակումբ 7—17 տարեկան մանուկների և պատանիների համար։

Ինժ. Արաշիձէ հաղորդում է ճան. հաղորդակ. մինիստրութեան, որ վրաց կառավարութեան ներկայացուցիչները չը կարողացան համաձայնութեան գալ Տփխիսի ածխահանքի բանւորների հետ, ուստի և գործադուլը շարունակվում է։ Բանւորներին լիկվիդացիօն տալով արձակելու և գործը նոր հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ կը լինի 1 և կէս միլիօն ր.

◆ Հոկտ. 31 ին, Փետրվարի 19-ի փող. № 9 տնից փախցրել են Թիֆլիսի քաղաքացի Իվ. Եաղուբօվին և տարել Մօչիվանքի գերեզմանատունը։ Կողոպտել են նրա վրա եղած բոլոր շորերը և մօտը գտնված դրամը։ Չարագործները թաքնվել են։

◆ Միլիցիոպետ Ուրուշաձէն քննելով քրէական միլիցիայի գործունէութիւնը՝ գտել է այն ոչ միայն անկազմակերպ, այլ և քայքայված։ Հետախուզութեան գործը բոլորովին թողնված է երեսի վրա։ Ծառայողները ոչ միայն չեն կատարում իրանց պաշտօնը, այլ և գործի չեն գալիս։ Նրանցից շատերը արդէն արձակված և նրանց տեղ վարձված են նորերը։

Դրամ վատնելու համար պաշտօնից արձակված են 5 րդ թաղամասի կօմիսարի օգնական Արաշիձէ և աւագ միլիցիօներ Խունդաձէ։

◆ Յովհ. Թումանեան հիւանդացել է ալպանական տենդով։ Վերջերս փոքր ինչ առաջադիմել է։

◆ Վրաց ներքին գործերի մինիստրութեան գլխաւոր վարչութիւնը յայտնել է ռուսաց ազգ. խորհրդին, որ մինիստրութիւնը, խորհրդի միջնորդութեան համաձայն, կարգադրել է, որ Նովօ-Ալէքսանդրօվկա գիւղի ռուս գիւղացիները ազատ լինեն գերման զինւորներին ձրի մթերքներ հայթայթելուց։ Իսկ խորհրդի միւս միջնորդութիւնը՝ իրաւունք տալ իրան՝ հայրենիք վերադարձող ռուս քաղաքացիներին վկայագրեր տալու մասին՝ ներքին գործերի մինիստրը մերժեց։

◆ Զինւորական մինիստրի 2 րդ օգնական նշանակվեց գեն. Մդիվանի։

Երկուշաբթի, նոյեմ. 4-ին, Արտիստ. Ընկ. թատրոնում Հայ Դրամատիկ Դերասանների Միութեան խումբը կը ներկայացնէ Դէմիրճեանի «Դատաստան» դրաման, որ արժանացել է Դրամատիկ. Ընկ. մրցանակին։

◆ Այսօր, երեկ. ժ. 5-ին, Կ. Հ. Բարեգ. Ընկ. դահլիճում կայանալու է Հայ Ուսանողա-Աշակերտական Դրամատիկ Ընկերութեան երրորդ ընդհանուր ժողովը։

◆ Վրաց արտաքին գործ. մինիստրութիւնը դիմել է Հայաստանի գործերի հաւատարմատարին, խնդրելով տեղեկագրել Հայաստանի կառավարութեան վաւերացնել բոները միասին հրատարակելու պայմանագիրը։

◆ Վրաց կառավարութիւնը որոշեց տուրք սահմանել թէյի բոլոր տեսակների վրա։ Ֆինանսների մինիստրի կարծիքով տուրքը տարեկան կարող է տալ 900,000 ր. օգուտ։

Ինչպէս յայտնի է, Գայիանեան դպրոցի ուսուցչական կազմը հեռացաւ և իր տեղը ենթարկեց բոյկոտի։ Հեռացած ուսուցչ. կազմի տեղը բօյկօտ յայտարարեց և Թիֆլիսի Հայոց Ուսուցչական Միութիւնը։ Սակայն, մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ, Ուսուցչական Միութեան հէնց նախագահ Թ. Խզմալեանը ստանձնում է բօյկօտ արված պաշտօններից մէկը։ Հետաքրքրական է, թէ Ուսուցչական Միութիւնը ինչպէս կը վերաբերվի իր նախագահի արած քայլին։

◆ Դարալագեազի շրջանում երևան են հանվել աղահանքեր։

◆ Արդարադատութեան մինիստրը յայտնել է քաղ. վարչութեան, որ ըստ սեպտ. 24-ի օրէնքի թէ թաղային և թէ պատուաւոր դատաւորները պէտք է լինեն Վրաստանի հպատակ և իմանան վրացական լեզուն։

Հաղորդում են, որ Էջմիածնում վախճանվել է Գարեգին եպ. Յովսէփեանը, որ վերջին տարիներս վարում էր Գէորգեան ճեմարանի տեսչի պաշտօնը։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Պետական թատրոնում օպերային ներկայացումները, որոնք ժամանակաւորապէս դադարել էին, կրկին սկսվում են այսօրվանից։ Թիֆլիս եկած յայտնի երգչուհի Ալեշկօյի մասնակցութեամբ այսօր կը տրվի «Пиковая дама»-ն։

◆ Վաղը առաջին անգամ այս սեզօնում կը տրվի «Mme Բատերֆլէյ» օպերան տ. Շուլգինայի մասնակցութեամբ։

Օպերային գործի գլուխ է կանգնել կրկին Ս. Եւլախովը։ Տեղերի գները պակասեցված են 40 տոկոսով։

◆ Արտիստական Ընկ. թատրոնում «Տարտօ» խումբը այսօր կը ներկայացնէ ցերեկով յօգուտ հայ ուսանողների «Ալուշը», իսկ երեկոյեան «Погибшая дѣвочка» կոմեդիան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԷՏՔ Է ՊԱՐԶԵԼ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

I

Թիֆլիս, 28 հոկտ.

Անցեալ շաբաթ «Ժողովրդի Ձայն» թերթի էջերում կարդացի, թէ իբր Նուխու և Արէշի Հայրենակց. Միութեան նախագահ Սիմէօն Շիեան և փոխ նախագահ Յովսէփ Մելիք-Զինճեան պատերազմական 100 հազար ռուբլիները գործել են իրանց սեփական աշխատանքի արդիւն և յուսենք թէ տիրոջ ամսասրով են գրաւված, հաշիւ չեն տալիս և մինչև օրս էլ լռութիւն են պահպանում։

Թէ առաջինը և թէ երկրորդը հասարակական գործիչներ են և մանաւանդ սերունդ կրթող մանկավարժներ, շարունակում են պահպանել ներկայումս էլ իրանց պատւաւոր դիրքերը։

Ինչպէս, եթէ յիշեալ պարոնները անմեղ են, թող անմիջապէս հաշիւ ներկայացնելով դատի ենթարկեն իրանց զրպարտողներին. եթէ ոչ, իրանք պէտք է կրեն արժանաւոր պատիժը. Հակառակ դէպքում ամօթ կը լինի Նուխու և Արէշի հայութեան։

Ս. Սողոմոնեան

II

Բաց նամակ Նուխու եւ Արէշի հայրենակց. միութեան վարչութեան

Թիֆլիս, 27 հոկտ.

Քանիցս անգամ մամուլում լոյս են տեսել յօդուածներ, որոնցով հասարակութեան լայն խաւերի ուշադրութիւնն է արտայայտվել վարչութեանդ մի քանի անդամների գործունէութեան նկատմամբ, պահանջվել է հրապարակական հաշիւ և այլն։

Հաշիւ դեռ չեմ առնում բազմիցս անգամ իմ և մի շարք հայրենակիցների կողմից այդ առթիւ անձնապէս ձեզ արած բարեկամական նկատողութիւնները։

Որովհետև մինչև օրս այդ բոլոր դիմումները լռութեան են մատնված, սրանով վերջին անգամ ես խնդրում եմ, որպէս զի վերջ տրվի հասարակութեան կասկածանքներին ժողով գումարել մօտակայ 10 օրվայ ընթացքում տեղում գտնվող բոլոր մեր հայրենակիցներից և մանրամասն հաշիւ ներկայացնել ստացած գումարների և թէ զեկուցել վարչութեանդ աւելի քան 8 ամսվայ գործունէութեան մասին։

Ալ. Տէր Աւագեանց

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ
Հրատարակիչ՝ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Մեդից. ֆելդշ. Ա. ԽԱՉԵԱՆԻ
Հիմնաւոր բժշկութիւն սուր և խրոնիքական տրիպերի, շանկրի, սիֆիլիսի (ներարկումն Էրլիխի խոսկան «914» ի և «606»-ի հմուտ մասնագէտ բժշկի հետ) սեռական թուլութեան, և այլ վեներական ցաւերի. Նորագոյն մեթոդներ և էլեքտրականութիւն. Կաշուի տակ սրսկումներ, լուացումներ, վէրքի փաթաթումն, բանկա կպցնել, ծաղկահատութիւն։ Մասսաժ ձեռքով և էլեքտրականութեամբ։ Վորոնցովի արձանի մօտ, Семеновская ул. № 9. Ընդունելութիւնը ամեն օր՝ 4—6 ժամը ճաշից յետոյ։ Կանանց 6—7-ը։
444 100—76

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
«ՄՇԱԿԻ» ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Արեւմտեան ռազմաճակատի
ՔԱՐՏԷԶԸ
ռուսերէն լեզուով, գունաւոր։
Գինն է 3 րուբլի։
5—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ԲԺԻՇԿ Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ
1) Առողջապ. Դաստիարակութ. 2 ր. 50 կ.
2) Малокровіе и его леченіе 25 к.
3) Легочныя заболѣванія 25 к.
4) Гигіена женщины I часть 1 р.
5) Վեներական ախտեր 1 ր.
Տպագրութեան է տրված
«Ջրային դար» պահպանութիւն-ջերմային բուժումն։
Ինչպէս վերոյիշեալ, նոյնպէս բոլոր ուրիշ բժշկական գրքոյկների համար դիմել «Գուտենբերգ» և «Գիր» գրավաճառանոցներին։
Գանձումը մեծաքանակ գնողների համար՝
Тифлисъ, Бебутовская ул. № 56. кв.
Д-ра В. А. Хачатрянца.
(ն. մ.) 823. 40—17

„ՄՇԱԿԻ" խմբագրատանը
վաճառվում են
հետեւեալ վիպական երկերը.
1) Զնուդ Քուշան, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի 1 ր. 50 կ.
2) Իննսուն երեք, վէպ Վ. Հիւգօյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . 2 ր. 25 կ.
3) Ուրանիա, աստղագիտ. վէպ Կ. Ֆլամարիօնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . 2 ր. 25 կ.
4) Տասն եւ երկու պատմուածք, Շահրիարի . . . . — 75 կ.
5) Սաւառնող ոգին, վէպ. Յ. Սոլովեանի . . . . — 60 կ.
6) Հայրենի հողը, Հանրի Բորդօյի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . . 90 կ.
7) Գաքօյի ընտանիք, վէպ Թիֆլիսի կեանքից, Լուսայի, . . . — 90 կ.
8) Ժահրոտ վէրքեր, Նշտարի . — 25 կ.
Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում։
ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ՊԱՏՈՒԻՐՈՂԻ ՎՐԱ։
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ
(4) 0—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Հայկ Տէվկանցի
ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՔՆԱՐ
բանաստեղծութիւնների ժողովածու։
Գինն է 5 րուբլի
Դիմել գրավաճառներին և հեղինակի մօտ,
Армянскій базаръ, № 28.
(հ.կ.) 991 4—3

ՀԻՊՆՈՏԻԶՄԻ և մարդկային մտքի բաղադրութեան
գործնական հոգեբանութեան
ԿՈՒՐՍԵՐ
Յարութիւն Շէքէրջեանի
Տալիս եմ փորձնական դասեր, դարմանում եմ զանազան հիւանդութիւններ՝ խուլերէս, սատմրոսային ներվային ցաւ, նեվրաստենիա, արբեցութիւն, ծխել և այլ վատ սովորութիւններ։ Ներշնչումն ծոյլ աշակերտ-աշակերտուհիներին՝ աշխատասէր լինելու համար։
Ընդունելութիւնը առաւօտեան ժամը 11—1 ը, Бебутовская № 56. Յ. Շէքէրջեան։
(կ.) 916. 40—34



Հայ-Կաթոլիկաց «Կուլտուրական Միութեան» Վարչութիւնն
յայտնում է ի գիտութիւն անդամների, որ կիրակի, նոյեմբերի 3-ին «Միութեան» դպրոցականների համար հիմնած ճաշարանի գրասենեակում կայանալու է
Ընդհանուր ժողով
Զբաղմունքի նիւթերն են.
1) Զեկուցումն «Միութեան» միամեայ գործունէութեան մասին։
2) Տնտեսական հաշիւ ճաշարանի և նրա շարունակութեան հարցը։
3) Վարչութեան կազմի նորոգութիւնը։
Ժողովը սկսվում է ուղիղ ժամը 1-ին։
Նախագահ՝ ՅՈՎՀ. ՔՈՍԵԱՆ
2—2 1002.

Типографія "ЭКОНОМІЯ" Тифлисъ.

№ 226 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1918
ՔԱՌԱՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 226

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նոյեմբերի 1-ից մինչև դեկտ 1 ը Թիֆլիսում 10 ռուբլի։
Առանձին համարները Թիֆլիսում և գաւառներում 50 կ., երկաթուղային կայարաններում 70 կոպ.։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Tiflis, Rédaction „Mschak"
Соломоновская, 21.

Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են՝ իւրաքանչիւր տողատեղին 70—40 կոպ.։

Հասցէն փոխելու համար պէտք ուղարկել թէ հին հասցէն և թէ 1 ռուբլի։

Ղևոնդ քահանան՝ տիրուհու, որդոց՝ Աննայի և Արամի, փեսայ Սեդրակի և աներորդի Գէորգ և Արմենակ Խասամեանների հետ միասին յայտնում է բարեկամներին և ծանօթներին իր թանկագին որդու՝

ՀԱՅԿ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆԻ

անժամանակ մահվան մասին, որ տեղի ունեցաւ կիրակի, ժամը $4^1/_2$-ին, կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Աղօթքը ամէն օր եր. ժ. 6-ին։ Թաղումը չորեքշաբթի, նոյեմբ. 6 ին իր բնակարանից (Мало-Ванкская Колокольный туп. № 1) Քամոյեան եկեղեցի և ապա դէպի Խօջիվանքի գերեզմանատուն։ 2—1

Սարգիս, Զարմայր և Սաթենիկ Մուրադեանները, Լիզա Մուրադեանը խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջին երեքը իրանց սիրելի և թանկագին հօրեղբօրորդի, իսկ չորրորդն իր անմոռանալի հօրեղբայր՝

Միսակ Գրիգորեան ՄՈՒՐԱԴԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 3-ին, առ. ժամը 8 ին։

Հոգեհանգիստը նոյեմբերի 5-ին և 6 ին, երեկոյեան ժամը 6-ին հանգուցեալի բնակարանում (անկիւն Լօրիս-Մելիքեան փողոցի և Մուշէյսկի նրբանցքի, № 2/8)։

Յուղարկաւորութիւնը հինգշաբթի, նոյեմբերի 7-ին, առ. ժամը 11 ին դէպի Քամոյեան ս. Գէորգ եկեղեցին։

Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒՆ)
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Այսօր, երեքշաբթի, նոյեմբերի 5-ին
կը ներկայացնէ
Ա. ՍՈՒՄԲԱՏՕՎԻ
ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ
(ИЗМѢНА)
Դրամատիկական լեգենդա Վրաստանի անցեալից 5 գործողութեամբ։
Մասնակցում են՝ տ. տ. Աստղիկ-Երամեան, Ցամրիկ, Տէր-Յակոբեան, օր. օր. Աստղիկ, Զաուչեան, պ. պ. Աղաբաբեան, Արմէն, Գալստեան, Գաւրօշ, Երամեան, Մարութեան, Միրզոյեան Գր., Մուսթաֆեան, Յովհաննիսեան II, Սարեան Գր., Քարտաշեան և այլք՝
Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 7-ին
Տեղերի գները 50 կ. մինչև 3 ր.։
Հերթ. ռեժիսոր՝ ՔԱՂԱՆԹԱՐ Լ.
Գեղարուեստ. մասի ղեկ.՝ Նազարեան Ի.
Սցենարիուս՝ Մալխասեան Գ.
Յուշարար՝ Աղաբաբեան Կ.
Վարչութեան հերթ. անդամներ՝
Նազարեթեան Ա., Յովհաննիսեան I,
1010. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
վերադառնալով վերսկսում է ներքին հիւանդութիւնների—Թոքախտի և սրտի ընդունելութիւնը՝ իր բնակարանում և լոյսի ու էլեկտրոնական կաբինէտում։ Հետազօտութիւնը և բժշկութիւնը X ճառագայթներով։
Ամէն օր՝ 9—1 և 5—7 ժամը երեկ.։
Բեբուտովսկայա փ., № 23. Հեռ. 7—92.
առ. (ա. օ.) 100—33

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետրօգրադի սիֆ.-վեներ. հիւ. կլինիկայի, ընդունում է յատկապէս միզասեռ., վեներական և սիֆիլիս հիւանդութիւն ունեցողներին։
Առաւօտ. ժամը 10—12.
Երեկ. » 5—7.
Սեմենովսկայա փ.18 (Վորոնցովի արձանի մօտ։ Բնակարանը Սեմեօնովսկայա, 16։
առ. (Ն. Ն. Շ. Կ.) 100—19

ԲԺԻՇԿ
Կ. Յ. ՂԱԶԱՆՃԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ։ Ընդունում է ամէն օր առաւ. ժ. 10—12-ը, երեկ. ժ. 5—7-ը, Աբաս-Աբադսկի պերեուլոկ № 7։
առ. (ա. օ.) 877 100—25

ԲԺԻՇԿ
Վ. Կ. Մարգարեան
Ներքին և ջղային հիւանդութիւններ. Բժշկութիւն և դաստիարակութիւն յետամնաց, ապուշ, աննորմալ երեխաների։ Ընդունելութիւնը ամէն օր՝
առաւ. ժամը 9—11-ը
երեկ. ժամը 5—7-ը
Абасъ-Абадская пл. уголъ Могнинск. ул. № 3,
առ. (Ն. Ն. Կ.) 757. 30—24

Բացված է
ԱԶԳ. ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺԱՐԱՆ
Մշտական մահճակալներով
ԲԺՇԿԱՊԵՏ
Ի. ԴՕՆԽԻՆԻ
Նախկին երկար-ժամանակեայ ասիստենտ Պարիզի և Վիեննայի համալսարանների աչքի հիւանդութիւնների կլինիկաների, ընդունում է
Աչքի հիւանդութիւններ
ունեցողներին ցերեկվայ ժամը 9-ից մինչև $11^1/_2$-ը և երեկ. 4—$7^1/_2$-ը. Միքայէլեան փող. 141 ([illegible] մօտիկ)։ Մեծ և վիրաբ. կարօտ հիւանդները ընդունվում են լրիւ պանսիօնով։
առ. (ա. օ.) 849. 100—24

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՎԱՆՑԵԱՆ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ։ Ընդունելութիւն ամէն օր՝ 12—1-ը ցեր., 6—7 երեկոյեան։ Շաբաթ օրերը ձրի ընդունելութիւն չքաւորների համար։
Абасъ-Абадская пл. д. № 1.
առ. (ա. օ.) 976. 100—8

ԲԺԻՇԿ
Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆ
Նախկին ասիստենտ Բեռլինի համալսարանի կլինիկաների
Մասնագէտ մաշկաբորբոքումների, կանանց հիւանդութիւնների, նրանց միզասեռական և վեներական ախտերի («606» և «914»), էլեկտրաբուժում արգանդի և ձուարանների խրոնիկական բորբոքումների։ Ամէն օր, երեկ. ժամը 5—7-ը, կիրակի օրերը առաւ. ժ. 10—11-ը։ Հասցէն՝ Օլգինեան փողոց, Մելիք-Ազարեանի տուն, № 3, բն. 12, հեռախօս № 16—71։
առ. (Ն. Ն. Շ. Կ.) 100—26

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
Մ. Մ. ԿԵՕՆՃԵԱՆԻ
Ոսկեայ և պլատինէ ատամներ, արհեստական ատամներ՝ ֆարֆօրից և ոսկուց (առանց քիմքի), վինտով ատամներ և այլն։ Ընդունելութիւնը՝ ցեր. 10—2-ը ժ.
Երեկոյեան 4—6 ժ.
Կիրակի օրերը 10—12 ժ.։
Լերմոնտովսկայա փողոց № 1, մուտքը Աբաս-Աբադսկի պերեուլոկից։
առ. 885. 100—13

ԲԺԻՇԿ
ԳՐ. Յ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
Նախկին ասիստենտ Ժընևի համալսարանի կլինիկաների և պրոֆ. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բուժարանի։
Ներքին և կանանց հիւանդութիւններ. մասնագէտ վեներական, միզասեռական և կաշուի ցաւերի։ Հին ու նոր [illegible] կոմպլէկսները. Ներարկում պրոֆ. Ehrlich-ի 606»-ի և «914»-ի պրեպարատները։ Էլեկտրաբուժում։
Ընդունելութիւնն առ. ժ. 10—12-ը, երեկ. 5—7-ը։ կանանց համար 12—1-ը։ Կիրակի օրերը ձրի ընդունելութիւն ցեր. ժ. 1—12-ը։
Կիրօչնայա փ. № 1.
առ. 7.9. 100—42

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԷՆՑԻԱՆ

II

Մենք մեր նախորդ առաջնորդող յօդուածով ցոյց տուինք մեր բացասական վերաբերմունքը դէպի կոնֆերէնցիան։

Օրէ-օր տեղի ունեցող քաղաքական խոշորագոյն դէպքերը թէ մեզ մօտ և թէ Եւրոպայում գալիս են հաստատելու մեր ասածները։ Այս րոպէիս մեր նորածին պետութիւնների սահմաններում տեղի են ունենում այնպիսի երևոյթներ, որոնք արդիւնք են քաղաքական շանտաժի, խաբէութեան և կատարեալ անբարեացակամ կամ թշնամական վերաբերմունքի դէպի հայերը։ Ախալքալաքի գաւառի հայ գիւղերը Թիւրք իշխանութիւնը բնակեցրել է Երևանից և այլ տեղերից գաղթեցրած մահմեդականներով, լաւ զինել նրանց և նմուշի համար թողել մի քանի կիսաւեր գիւղեր և տնակներ՝ վերադարձող հայ փախստականների համար։ Այս աշխարհ անարդարութեան, նոյն իսկ քաղաքական շանտաժի դէմ բողոքող չը կայ, պաշտպան՝ ոչ ոք, մնում է որ հայկական կառավարութիւնը ինքնին մենակ հանդէս գայ իր ժողովրդի շահերի պաշտպանութեան համար։ Միւս կողմից հրաւիրում են հայ ժողովրդին յանուն անդրկովկասեան շահերի, համերաշխութեան և այլ մեծադղորդ ֆրազների հանդէս գալ կոնֆերէնցիայում միւս դրացիների հետ…

Հայաբնակ տեղերը մահմեդականներով լցնելու նոյնանման երևոյթը տեղի է ունեցել նաև Արդահանի, Օլթիի, Արդվինի և Արդանուշի շրջաններում։

Արդարութիւնը պահանջում է, որ այդպիսի խաբեբայական դէպքերի դիմաց, այդպիսի քաղաքական շանտաժի առաջ անդրկովկասեան կառավարութիւնները համերաշխ հանդէս գան փոխադարձ շահերի պաշտպանութեան համար, անխտիր որ կողմից էլ դրանք ոտնակոխ արված լինեն. եթէ նոյնանման դէպքեր նոյն իսկ տեղի են ունեցել նաև հայկական կառավարութեան սահմաններում, միևնոյն է, պէտք է անպատճառ դրանց արդարացի լուծումը պահանջել։

Մինչդեռ մենք ականատես ենք մի չը տեսնված քաղաքական երևոյթի. կարծէք Անդրկովկասը իրանից ներկայացնում է մի անտէր և անօգնական երկիր, որտեղ ամէն մի ազգութիւն ամէն տեսակ միջոցներով, այլ և այլ հնարներ գործ դնելով, իսկ Թիւրք կառավարութիւնն էլ իր հայատեաց և անխիղճ քաղաքականութեամբ աջակցելով, միմեանցից հողամասեր գրփել-գզելով են զբաղված…

Հրապարակներում, պարլամենտներում, լրագիրներում լսում ենք միայն մեծամեծ՝ շանթալից ֆրազներ մարդկային իրաւունքների, համամարդկային համերաշխութեան, դեմօկրատիայի պաշտպանութեան և այլն և այլն։ Բայց, իրական կեանքում, գործնական փոխ-յարաբերութիւնների շրջանում իշխում է միմիայն անսանձական ախորժակը, որին յագուրդ տալու համար ներելի են ամեն տեսակ միջոցներ, մինչև իսկ ստորութիւն, խաբէութիւն, դաւաճանութիւն և լրտեսութիւն…

Եւ այսպիսի մթնոլորտում, որտեղ ամենից շատ տուժողը խեղճ ու կրակ հայ ժողովուրդն է, հրաւիրում են այդ նահատակվող տարրին կոնֆերէնցիա… լսելու քաղցր խօսքեր, իսկ երբեք տուժելու և խուզվելու…

օրին տեղի ունեցաւ ուսանողների և բանւորների հսկայական ցոյց։ Խօսելով պարլամենտի առաջ, պատգամաւոր Բեննէշը գովեց քաղաքացիների, բանւորների և գիւղացիների քաջութիւնը։ Ազգային խորհրդի կողմից նախագահը յայտնեց, թէ ազգային կառավարութիւնը իր ձեռքն է առել ամբողջ իշխանութիւնը։ Ամբոխը աղաղակեց. «առանց Հաբսբուրգի»։

Պատգամաւոր Մալիկ օֆիցերական զգեստով պահանջեց օֆիցերներից և զինւորներից ամրացնել կայսերական կոկարդների վրա ազգային երեք գոյնի նշան. «Ծածկենք այն ամօթը, որ մենք կրում էինք մեր գլխարկների վրա, նրանով, ինչ ապրում է մեր սրտերում»։ Զինւորները պոկում էին կոկարդները և փոխարինում ազգային նշաններով։ Զինւորները ամբոխի հետ միասին յարձակվեցին զինւորական բանտի վրա և ազատեցին զինւորական յանցաւորներին, նաև բոլոր քաղաքական բանտարկեալներին։

—

(Ինֆորմացիոն մամուլ, նոյեմբ. 2-ից)

Վիեննայից հաղորդում են, թէ նաւատորմը հարաւ-սլաւոնական ազգային խորհրդին յանձնելուց յետոյ, մի քանի իտալական ծովային օֆիցերներ մտան Պոլէի նաւահանգիստը, ականներ դրին «Վիրիբուս Ունիտիս» ռազմանաւի տակ և ջրասուզեցին։ Շտաբը և նաւաստիների մեծ մասը ազատվել են։

Բուդապեշտի նոր կազմակերպված կաբինէտը պահանջել է թագաւորից հրաժարվել հաւատարմութեան տուած երդումից։ Պահանջը բաւարարված է։ Մինիստրների խորհուրդը քննեց այն հարցը, թէ Ունգարիան մնալու է թագաւորութիւն թէ հանրապետութիւն։ Վճռվեց, թէ պետութեան ձևի հարցը կը վճռվի համաժողովրդական ձայնատուութեամբ։ Նոր կաբինէտը հաւատարմութեան երդում տուեց ազգային խորհրդին, որի ժամանակ եղան աղմկալի ցոյցեր։

Տրիէստում իտալական լիբերալները և սօցիալիստները կազմակերպեցին հանդիսաւոր երթ քաղաքի մէջ յօգուտ իտալական Տրիէստի անկախութեան, ընդդէմ հարաւ-սլաւոնների պահանջի։ Սլաւոնները նոյնպէս երթ կազմեցին, որի ժամանակ տեղի ունեցան ընդհարումներ երկու խմբակների մէջ։

ՎԻԵՆՆԱ, 2 նոյեմբ.—Համաձայն պաշտօնական հաղորդագրութիւնների, Աւստրո-Ունգարիայի և հարաւ-սլաւոնական երկրների նոր կազմակերպված ազգային պետութիւնները ունենալու են սեփական զօրքեր։

Սօց.-դեմ. կուսակցութեան երեկվայ նիստում բանաձև ընդունվեց, որ բոլոր ազգութիւններին տալիս է ինքնորոշվելու իրաւունք և նոյնը պահանջում է գերման ժողովրդի համար։

Զինւ. մինիստրութիւնը առաջարկեց ազգային խորհրդին ուղարկել շուտով պատգամաւորներ զինւորական նոր մինիստրութիւն, որպէս զի միասին իր ժամանակին հոգան կազմակերպված զօրացրման, զօրքերը հայրենիք ուղարկելու և զինւորական ընդհանուր գոյքը հաւասարապէս բաժանելու մասին։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Ունգարական ազգային խորհրդի գործադիր կոմիտէն յայտնեց կայսր Կարոլին, թէ կառավարութիւնը ազատ է թագաւորին տուած իր երդումից, և իր ծրագրի մէջ մտցնեց պետական կազմի հարցը։

ՏՐԻԵՍՏ.—Երեք իտալական և սլաւոնական կուսակցութիւնների ներկայացուցիչների կոմիտէն ստանձնեց հասարակական ապահովութեան պարտականութիւնները. փոխարքան և ոստիկանապետը նախագահի հետ միասին հեռացան քաղաքից և յառագայում իրանց պարտականութիւնները կատարելու են Պրագայում։

ՎԻԵՆՆԱ, (բոլշ. մամուլ, բիւրօ).—Աւստրիան հանում է իր զօրքերը իտալական շրջաններից։

ՎԻԵՆՆԱ—Աւստրիական 23 դիվիզիաներ ապստամբվել և փախել են զօրանոցներից։ Զանազան ազգութիւնների տարրերը [illegible] կռւում են միմեանց դէմ։ Զօրքերն անկարգ նահանջում են։ Աւստրո-Ունգարիայից ստացված բոլոր տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ չափազանց մեծ յուզմունքը կործանում է հաբսբուրգների նախկին պետութիւնը։

ՎԻԵՆՆԱ.—Ազատվեց Ֆրիդրիխ Ադլերը և կանգնեց յեղափոխութեան գլուխ։

ԲԵՌԼԻՆ.—Չեխական նոր պետութիւնը ճանաչվեց գերմանական կառավարութիւնից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ. ՄԻՋՈՑՈՎ

—o—

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

—

(Գերմանական մամուլ, նոյեմբերի 1-ից)

Ունգարական ազգային խորհուրդը դիմեց ունգար ժողովրդին հետևեալ կոչով.

«Ունգարիայի ժողովուրդը, նրա զինւորները, նրա բանւորները և նրա քաղաքացիները իրանց ձեռքն առան երկրի կառավարութեան ղեկը։ Ունգարիայի ժողովուրդը շարժվեց և իշխանութիւնը ժողովրդի ձեռքն անցաւ դրա հետևանքում։ Ունգարիայի ղեկավարները երկրի քաղաքական իշխանութիւնը յանձնեցին ունգար ժողովրդի ազգային խորհրդին։ Ունգարիայի ամբողջ զինւորական ու քաղաքացիական իշխանութիւնը գտնվում է ազգային խորհրդի նախագահ կոմս Միքայէլ Կարոլիի ձեռքում։

«Ունգարական ժողովրդական կառավարութեան նախագահ կոմս Միքայէլ Կարոլին և ունգարական ազգային խորհուրդը շնորհաւորում են այդ յաղթութեան առթիւ Ունգարիայի ժողովրդին ու ունգարական [illegible] և աղերսում են ժողովրդին համաշխարհային հաշտութեան սրբազան անունով և երկրի կողմից վերադառնալ աշխատանքի։

«Զինւորներ. վերադարձէք ձեր զօրանոցները և սպասեցէք այնտեղ ունգարական ժողովրդական կառավարութեան կարգադրութիւններին, որ ձեզ կը տայ իրաւունք և խաղաղութիւն։ Ամեն ոք պէտք է խուսափէ կարգազանցումից ու հանգստութիւնը որևէ կերպ խախտելուց։ Ազգային խորհուրդը Ունգարիայի ժողովրդից սպասում է վստահութիւն ու հանգստութիւն»։

Կարոլիի նոր մինիստրութիւնը վերջնականապէս կազմվեց։ Արտաքին գործերի մինիստրն է կոմս Թէոդորոս Բատիանին։

Բուդապեշտը և գաւառական քաղաքները զարդարված են դրօշակներով. փողոցներում երթևեկելու տեսարաններ են։

Ազգային խորհուրդը որոշեց դադարեցնել ճանապարհորդական երթևեկութիւնը երկաթուղագծերի վրա, երթևեկում են միայն պարենաւորման գնացքները։ Բուդապեշտում ազգային խորհրդի ուղարկած զօրքերն ազատեցին այն զօրանոցները, որոնց զինւորները շրջապատված էին ժանդարմներով։ Ժողովրդի առաջին ամբոխը խուժեց բանտը և ազատեց Լէյնէտրին, որ նորերս մահափորձ կատարեց կոմս Տիսսայի կեանքի դէմ պարլամենտի շինութեան առաջ։

Կոմս Տիսսան իր ազգականուհու հետ զբօսնելու ժամանակ սպանվեց զինւորների ձեռքով։ Ազգականուհին վիրաւորված է լուրջ կերպով։

Տրիէստի փոխարքայ բարոն Ցրիէնկէնը ուտոմօբիլով Լէբախը անցնելու ժամանակ կալանաւորվեց։ Կալանաւորված են նաև սահմանակից շրջանի ուրիշ բարձրաստիճան գերման պաշտօնեաներ։ Կոմս Ատտէմսը [illegible] Լէբակից։

Վիեննայում հոկտ. 31-ի երեկոյեան կազմակերպվեց պետական խորհրդի շինութեան մէջ ժամանակաւոր զինւորների կենտրոնական կոմիտէ։

Պրագայում չեխական ազգային խորհուրդը արգելել է մթերքները ու ուրիշ շատ անհրաժեշտ առարկաները արտահանութիւնը. Այդ միջոցը ուղղված է Ունգարիայի դէմ։

Կոմս Անդրաշին աքսորվելու է Աւստրո-Գերմանիայի սահմաններից՝ Վիլսոնին ուղարկած պաշտօնագրի պատճառով։

Վալերսդորֆի զինւորական բանտից փախել են 200 զինւորական յանցաւորներ։

Վիէննա. Թղթակցը հաղորդում է. երէկ երեկոյեան զայրացած զինւորները խորհրդէ նիստը, որ ընտրվել էր պարլամենտում ճաշելու։ Նրանց ընթացաւ հարթ։ Դրանից յետոյ զինւորները և օֆիցերները երթ կազմելով գնացին զինւորական մինիստրութեան և Ֆրանց-Իօզէֆի անուան գետափը, ուր նրանց միացաւ ուրիշն բազմութիւն, որի թւում [illegible] տարրեր։ [illegible] տեղ-տեղ պատուհանները ջարդվեցին. ազգային նշանները չունեցող օֆիցերները կալանաւորվեցին։ Ամբոխը ապա գնաց Րօզաուէրի զօրանոցները կողմը՝ կալանաւորներին ազատելու համար։ Այստեղ ուժեղ պահակախումբը կրակեց ու ցրեց ամբոխը։ Երեկոյեան ժ. 9-ից յետոյ հանգստութիւնը վերականգնվեց։

Վիէննայում հանգիստ է։ Կայսր Կարլը Վիէննայումն է։

«Բ. Տ.» հաղորդում է հետևեալը Վիէննայում տեղի ունեցած ցոյցի մասին։ Պարլամենտի շինութեան առաջ հոկտ. 30 ի կէս-

ՌԱՅԽՍՏԱԳԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՎԻԼՀԷԼՄԻ ԳԱՀԸՆԿԷՑՈՒԹԻՒՆԸ

ԲԵՐԼԻՆ, 1 Նոյեմ.—«Ֆօրվէրտս»ը ճշդում է, թէ ստատս-սեկրետար Շէյդեմանը ներկայացրել է րայխս-կանցլերին մի գրութիւն այն մասին, թէ անհրաժեշտ է հեռացնել իշխանութիւնից կայսրին։

Այդ քայլն արված է ռայխստագի ֆրակցիաների և կուսակցական ներկայացուցչութիւնների համաձայնութեամբ։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

(Բոլշև. մամուլի բիւրօ)

ԲԵՐԼԻՆ, 2 Նոյեմբ.—Կառավարական սոցիալիստները իրանց մամուլի մէջ պնդում են գերմանական կայսրի գահից հրաժարվելու վրա։

Գերմանական բուրժուազիայի մէջ տիրում է սարսափ։

Բուրժուազիան հանում է իր դրամները բանկերից և խնայողական գանձարաններից և պահում է իր մօտ։

Մեծ քաղաքները դրամների մեծ պակասութեան պատճառով բաց են թողնում թղթադրամներ։

Գերմանական կառավարութիւնը մտադիր է կտրուկ պայքար սկսել բոլշևիզմի դէմ։ Կայացված է համապատասխան վճիռ։

ՊԱՐՏՎԱԾ ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒ ՅԱՂԹՈՂՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ

ՊԱՐԻԶ, 1 Նոյեմբերի. — Ֆրանսիական ծովային մինիստրը յայտնեց պալատում, թէ Թիւրքիայի հետ կապված զինադադարը ամենից առաջ նախատեսում է.—դաշնակիցների նաւատորմի ազատօրէն մտնելու է Սև ծով, դաշնակիցները գրաւելու են Դարդանէլի բերդերը, ինչպէս և Բօսֆորի ամրոցները, նաև դաշնակիցների գերիները պէտք է վերադարձնեն հայրենիք։

Զինադադարը իր ուժի մէջ մտաւ հինգշաբթի օրը կէսօրին, հոկտ. 31-ին։

Անգլիական «Իվնինգ Նիւս» լրագիրը յայտնում է, թէ ամեն րոպէ սպասվում է Կ. Պօլսի գրաւումը բրիտանական պատերազմական ծովային ուժերով։

ԼԻՏՎԱՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹԻՒՆ

(Գերմանական մամուլ, 1 Նոյեմբ.)

Լիտվական տեղեկատու բիւրօն յայտնում է, թէ Վիլսոնը Վաշինգտոնի լիտվական խորհրդի նախագահին յանձնել է մի դօկումենտ, որով նա Լիտվան ճանաչում է իբրև ազատ պետութիւն և խոստանում է միացնել բոլոր լիտվական շրջանները մինչև Արևելեան Պրուսիա, մինչև Կեօնիգսբերգ, մի ազգային պետութեան մէջ։

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ՄՇԱԿԱԾ ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 2 Նոյեմբ.—Պարիզում դաշնակիցները մշակել են զինադադարի հետևեալ պայմանները.

1) Գերմանիան անմիջապէս դուրս է տանում իր զօրքերը Էլզաս-Լօթարինգիայից.

2) Ֆրանսիացիք գրաւում են Մեցը և Ստրասբուրգը.

3) Գերմանիան յանձնում է իր պատերազմական նաւատորմը.

4) Անգլիացիք գրաւում են Հէլգօլանդը.

5) Ամերիկացիք գրաւում են Ռէյնի կամուրջները.

6) Էսսէնի թնդանօթի և զէնքի գործարանները պէտք է ենթարկվեն դաշնակիցների վերահսկողութեան։

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՐԼԱՄԵՆՏ

(Նիստ Նոյեմբ. 2-ի)

ԹԻՖԼԻՍ.—Կարդացվում է Հայաստանի խորհրդից ստացված հետևեալ հեռագիրը.

«Հայաստանի խորհուրդը հոկտ. 29 ի նիստում գոհունակութեամբ լսեց մինիստր-նախագահի զեկուցումն այն մասին, թէ հանրապետութիւնների սահմանապահ զօրամասերի միջև ծագած միջադէպը կը լուծվի փոխադարձ համաձայնութեամբ։

«Տալով համապատասխան ցուցմունք իր կառավարութեանը, Հայաստանի խորհուրդը որոշեց դիմել Վրաստանի պարլամենտին, արտայայտելով խորագոյն հաւատ առ այն, թէ ոչ մի թիւրիմացութիւն չէ կարող երբեք խզել երկու եղբայր ժողովուրդներին միացնող դարաւոր կապերը։

«Խորհուրդը հաւատում է, թէ Վրաստանի պարլամենտը նոյնպէս ձեռք կառնէ ամեն միջոց առաջիկայ բանակցութիւնների խաղաղ լուծման համար։

«Հայաստանի խորհրդի նախագահ՝ Աւ. Սահակեան։

«Ընդ սմին կառավարութեան դիւանը պատիւ ունի հաղորդել, թէ հեռագիրը ուշ ուղարկվեց այն պատճառով, որ Թիֆլիսի ռադիօ-կայանը չընդունեց իր ժամանակին։

«Կառավարութեան դիւանապետ՝ Կոստանեան»։

Արսէնիձէի առաջարկութեամբ՝ պարլամենտը յանձնարարում է պրեզիդիումին ուղարկել պատշաճ պատասխան հեռագիր Հայաստանի խորհրդին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Գերմանական մամուլ, 1 Նոյեմբ.)

◆ Գեն.-լէյտենանտ Գրօնէրը նշանակվեց Լուդենդորֆի փոխարէն գեն. շտաբի գլխաւոր կառավարիչ։

❖ Իտալական նաւատորմը իտալական ազգաբնակութեան խնդրքով մտել է Ֆիումէ։

❖ Ֆէլդմարշալ լէյտենանտ Իվանօվիչը սլաւոնական ազգային խորհրդից նշանակվել է բոլոր սլաւոնական զօրքերի հրամանատար։

❖ Զօրացրման և զօրանոցային ռեժիմը վերացնելու վերաբերմամբ բանակցութիւնները մտնում են իրանց վախճանին։

ՆՈՐԱԳՈՅՆ ԼՈՒՐԵՐ

❖ Սևաստօպօլը գրաւված է խորհուրդների զօրքերի ձեռքով յամառ կռիւներից յետոյ։

◆ Անգլիացիք երևացել են Բեսսարաբիայում և Իզմայիլում։

◆ Հոլլանդական զօրքի քանակը աւելացվում է։

❖ Բոլշևիկների հաղորդագրութեան համաձայն, գեն. Դենիկինը հրամայել է գնդակահարել բոլոր բոլշևիկ գերի օֆիցերներին։

❖ Անգլիական լրագրների ասելով, Ռուսաստանում կազմվել է կարմիր զօրք կէս միլիօն հոգուց բաղկացած՝ երկաթէ կարգապահութեամբ։

ՊԱՏԵՐԱԶՄ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆ, 2 Նոյեմ.—Արևմտեան զօրաճակատ։ Կրօնպրինց Րուպրէխտի զօրաբանակ։ Դէյնզէից հարաւ մենք խուսափեցինք թշնամու յետագայ յարձակումներից անցնելով Շէլդան։ Մեր դատարկած վայրերը ուժեղ ռմբակոծութեան ենթարկելուց յետոյ թշնամին հետապնդեց մեզ և երեկոյեան ճակատում էր մեր առաջապահ զօրախմբերին Դէյնզէից արևելք ու Շէլդայից արևմուտք։

Վալանսիէնից հարաւ անգլիացիք գործում են ուժեղ յարձակումներ։ Օրնայից ու [illegible] թշնամին խուժեց մեր զօրագծերը և և հասաւ Վալանսիէնի հարաւային արուարձաններին և առաջացաւ Բրէզօյի մօտից։ Եռանդուն հակայարձակումներով մեզ աջողվեց գրաւել նորից Սօլտէնի հարաւ-արևմտեան կողմի լեռնագագաթները, իսկ յետոյ Բրէզօ գիւղը։ Գիշերը մենք թողինք Վալանսիէն քաղաք՝ առանց թշնամու կողմից արգելքի հանդիպելու։

Գերմանական կրօնպրինցի զօրաբանակ։ Հզօր թնդանօթաձգութեան հետևեցին ամերիկացիների և ֆրանսիացիների յարձակումները էնի զօրաճակատը ճեղքելու նպատակով։ Արգօնների և Մէօզայի միջև՝ էնից արևմուտք և Լէ-Սէյվի ու Իվերուայի միջև թշնամու յարձակումներն անաջող անցան։ Այստեղ ֆրանսիացիների դէմ մղած ծանր կռիւների մէջ մեր զօրքերը նոր աջողութիւն ունեցան։ Մեր զօրքերը վանեցին թշնամու յարձակումները Փոքր Կանտէնի, Բանօնի, Շատօ-Պորսիօնի և Րէկուվրանսի մօտ։ Ֆօրժէից հարաւ-արևմուտք լեռնագագաթները մի քանի անգամ ձեռքից ձեռք անցան։ Աջող հակայարձակումներից յետոյ դրանք մնացին մեր ձեռքում։ Րէտէլի երկու կողմում թշնամին անցաւ էնի հիւսիսային ափը։ Հակայարձակումով նա կրկին վանվեց գետի հարաւային ափը։

Վուզիէրի երկու կողմում ֆրանսիացիք յարձակում գործեցին խոշոր ուժերով, նաև էն գետի ու Գրանդ-Պրէից հիւսիս ընկած տարածութեան միջև։ Րիլի մօտ մենք ետ քաշեցինք մեր առաջաւոր դիրքերը դէպի էն գետի հիւսիսային ափը։ Ֆօնսի մօտ թշնամին առաջացաւ էնի արևելեան ափը։ Վուզիէրի երկու կողմում թշնամու 6 յարձակումներն անաջող անցան։ Վանդի մօտ թշնամին ետ մղվեց։ Նրան աջողվեց ամրանալ Ֆալէզի մօտ։ էնի և Գրանդ-Պրէի միջև մենք վանեցինք թշնամու յարձակումները մեր զօրագծերի առաջ։

Ֆրանսիացիք այդպիսով այս արշաւանքի ժամանակ, չը նայած կռւի հանած խոշոր ուժերին, շահեցին միայն աննշան տարածութիւն Վուսի և Ֆալէզի մօտ։

(Երեկոյեան)։ Անգլիացիք Վալանսիէնից հարաւ, իսկ ամերիկացիք Մաասից արևմուտք յարձակումները վերսկսելով կարողացան ձեռք ձգել տարածութիւն միմիայն տեղ տեղ։

ԲԵՐԼԻՆ, 3 Նոյեմբ.—Արևմտեան զօրաճակատ։ Կրօնպրինց Րուպրէխտի զօրաբանակ։ Ֆլանդրիայում մենք ետ քաշեցինք մեր զօրքերը Լիսի շրջանից, համակերպվելով Շէլդայի մեր զօրաճակատին, Գենտի ուղղութեամբ։

Վալանսիէնից հարաւ անգլիացիք շարունակեցին գործել ուժեղ յարձակումներ։ Մինչև կէս օր թշնամին ետ մղեց մեզ դէպի Սօլթան և նորից ամրացաւ Բրէզօյում։ Վիլլէր-Պօլը պահեցինք հակառակորդի բազմաթիւ յարձակումների դէմ։

Գերմանական կրօնպրինցի և Գալվիցի զօրաբանակներ։ Գէզից արևմուտք թշնամու յարձակումները ապարդիւն են անցնում։ Ֆրանսիացիք էնի զօրաճակատի վրա խոշոր կորուստներ կրելուց յետոյ այլևս չը վերսկսեցին իրանց ուժեղ յարձակումները։ Նրանց մասնաւոր յարձակումները մենք վանեցինք։

Մաասից արևմուտք ամերիկացիների յարձակումներից մենք ստիպված եղանք ետ տանել մեր զօրաճակատը էնի և Շամպինօլի միջև։ Մօզէլից արևմուտք ուժեղ առաջապահ կռիւներ են, ինչպէս և էնի և Մաասի միջև ընկած մեր նոր զօրագծերի առաջ։

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԻԵՆՆԱ, 2 Նոյեմբերի.—Իտալական լեռնային զօրաճակատի վրա մեր զօրքերը կանոնաւոր նահանջով գրաւում են իտալական պատերազմից առաջ եղած դիրքերը։

Վենետիկի դաշտում մեր զօրքերը նահանջում են Տագլիամենտոյի միւս ափը։

Սերբիայից մեր զօրքերը բոլորովին կը հեռանան ամենամօտիկ ժամանակում։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐԻԶ, 3 Նոյեմբերի.—Կատաղի ճակատամարտը, որ տեղի էր ունենում Արգօններում ամերիկեան զօրքերի մասնակցութեամբ, վերջացաւ լիակատար աջողութեամբ ի նպաստ մեր։ Գերմանացիք, որոնք յուսահատ դիմադրութիւն էին ցոյց տալիս, վերջապէս տեսան, թէ իրանց դիմադրութիւնն ընկճված է ֆրանսիացիների յաղթական ջանքերից։ Ցախուտ գրոհով ֆրանսիական զօրքերը վերցրին վեց գիւղեր։ Առաջանալով դէպի հիւսիս, նրանք գրաւեցին Վօնկ և Շէան անտառները։ Ազատագրված Արգօնները հանդիսանում է կատարված փաստ։ Տակաւին չեն հաշված աւարը և գերիների թիւը։

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՕՍԿՎԱ, 3 Նոյեմբ.—(Մամուլի բիւրօ)։ Բալաշօվօ-Կամիշինի ռազմաճակատում մեր զօրամասերը երկու անգամ ջարդեցին հակառակորդին և հետապնդեցին նրան 20 վերստի վրա դէպի հարաւ։ Հակառակորդը կորցրեց աւելի քան 1000 սպանված։ Մեր ձեռքն են ընկել շատ գերիներ ու հարուստ աւար։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՈՒՐՔԵՐԸ ՄԱՔՐՈՒՄ ԵՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ

Աբդիւլ Քէրիմ փաշան յատուկ հեռագրով հաղորդում է հայկական դիւանագիտական միսիային Վրաստանում, թէ ինքը մեծվեզիրից հրաման է ստացել՝ նոյեմբերի 24-ից սկսած մաքրել Անդրկովկասի գրաւված մասերը թիւրքերից՝ մինչև Բրէստ-Լիտովսկի պայմաններով իրանց մնացած սահմանները։

ՕՏԱՐԱՀՊԱՏԱԿՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԳՐԱՒՄԱՆ ՀԱՐՑԸ

Հայաստանի դիւանագիտ. հաւատարմատարը դիմեց վրաց արտաքին գործ. մինիստրին, հարցնելով թէ մասնաւորական գոյքի գրաւման օրէնքը տարածվե՞լ է արդեօք օտարահպատակների վրա։ Հարցումը յանձնված է երկրագործութեան մինիստրի եզրակացութեան։

Միաժամանակ Հայաստանի դիւանագիտ. հաւատարմատարը հարցում է արել արտաքին գործ. մինիստրին, թէ հնարաւոր չէ՞ արդեօք կանգնեցնել օտարահպատակներին պատկանող հողերի գրաւումը, մինչև այդ խնդրի վերջնական լուծումը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Կառավարութեան հրամանով զինուորական մինիստրութիւնը, նոյեմբերի 2-ից, Վրաստանի հանրապետութեան բոլոր երկաթուղիները և Փօթիի նաւահանգիստը իրանց շրջանակներով յայտարարել է պատերազմական դրութեան մէջ, բացի երկաթուղու հարաւային մասից, Նաւթլուղից սկսած, որը ենթարկվում է գեն. մայոր Ծուլուկիձէի հայեցողութեան։ Բոլոր շրջանների կառավարիչ է նշանակված գեն.-մայոր Գարալաշվիլի։ Նրան են ենթարկվելու և բոլոր զօրամասերն ու կազմակերպութիւնները, որոնք նշանակված են պաշտպանելու երկաթուղիներն ու նաւահանգիստը։ Նրան են ենթարկվում նաև զրահապատ բոլոր գնացքները, որ նշանակված են երկաթուղիների պաշտպանութեան համար։ Փօթիի նաւահանգստի պաշտպանութիւնը գեն.-մայոր Գարալաշվիլին յանձնել է Փօթիի գարնիզօնի պետ գնդապետ Չխէիձէին, իսկ զրահապատ գնացքի պետ Կոպալաձէն նշանակվում է հանրապետութեան բոլոր երկաթուղիների զրահապատ գնացքների կառավարիչ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ռուսական «Մունիտտոս» ընկերութիւնը առաջարկել է վրաց կառավարութեան նաւթ մատակարարել. առաջարկն ընդունված է։

◆ Բագուի ռուս ազգ. խորհուրդը միջնորդել է Ադրբէջանի կառավարութեանը խնդրելով թոյլ տալ, որ ռուս ազգաբնակութիւնը ծեր և [illegible] փոխադրվի երկաթուղով դէպի Փօթի։ Նոյն խնդրքով դիմում է եղել նաև Վրաստանի դիւանագիտական ներկայացուցչին Ադրբէջանում, որ նա միջնորդի վրաց կառավարութեան, որպէս զի թոյլատրվի ռուս ճամբորդներով գնացքն ուղղակի անցնելու։

❖ Հոկտ. 30-ին 9-րդ թաղամասից գողացված է 1777 ռացիօնի շաքարի տոմսեր։

◆ Բագուից վերադարձել է գերման պատուիրակութիւնը՝ ֆօն դէր-Գոլցի գլխաւորութեամբ, Բիչերախովի և անգլիական զօրքերի ներխուժման երկիւղից։

ԳԻՏ., ԳՐԱԿԱՆՈՒԹ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

«Դատաստան»։ Բանաստեղծ Դ. Դեմիրճեանի դրամատուրգիական այդ առաջին լուրջ փորձը (նրա «Վասակ» վերնագրով պիէսը չէ կարելի լրջօրէն հաշւի առնել) որոշ տեղ է գրաւել մեր ինքնուրոյն ռեպերտուարի մէջ. և, անշուշտ, նա արժանի է այդ տեղին։ Այդ պիէսը՝ իր խոշորագոյն թերութիւններով հանդերձ՝ մի ուշագրաւ և ողջունելի երևոյթ է մեր թատերական գրականութեան մէջ. բացի այն, որ պիէսի մէջ մի շարք տեսարաններ կան, որ կարող են գոհացնել ամենապահանջկոտ քննադատին, ինքը պիէսը ինչ որ հաճելի բուրմունք է պարունակում իր մէջ, որն և շոյում է հանդիսականի զգայարանքները։

Ժողովրդական Տան թատերասէրները, ընդհանուր առմամբ, այս անգամ էլ ընդունակ հանդիսացան բաւարար չափով պարզելու հասարակութեան առաջ հեղինակի գեղարուեստական դիտաւորութիւնները և պիէսի գործող անձերի հոգեբանութիւնը։

Թոմասի կենտրոնական դերում պ. Երամեանը ամենայն առիթ ունէր ցուցադրելու իր բեմական տաղանդը։ Եւ, պէտք է ասել, նա օգտվեց այդ առիթից։ Մանաւանդ առաջին գործողութիւնը առաւելապէս աջողված պէտք է համարել։ Այս անգամ (և դա շատ և շատ գովելի է) պարոնը միանգամայն հրաժարվել էր սովորաբար իրան յատուկ կեղծ-դասական պաթոսից և չափազանց «բեմական» շարժուձևից. ապրումները ճիշդ էին և զուսպ, արտայայտութիւնները միանգամայն համապատասխան դերի և ամբողջ պիէսի ոգուն։ Նոյն ձևով պարոնը սկսեց երկրորդ գործողութիւնը, սակայն այս գործողութեան մօտաւորապէս կիսում դերակատարութեան մէջ կատարվեց մի ինչ որ բեկում, մի քանի վայրկեան մէջ դերակատարը կորցրեց մինչև այդ աջող տոնը, ապրումների թելը կտրվեց. և որքան աւելի էր փորձում դերակատարը կրկին կանգնելու ռելսերի վրա, այնքան աւելի տոնն ու ապրումները դառնում էին բռնազբօսիկ և ոչ հաւատալի։ Այդ լարուածութեան հետևանքը եղաւ այն, որ վերջին արարուածի մէջ ուժերը միանգամայն դաւաճանեցին պ. Երամեանին և նա չը դիմացաւ դերի ծանրութեանը։

Աղա-Մէլիքի դերում պ. Մարութեանը, դժբաղդաբար, չօգտագործեց այն առատ նիւթը, որ տալիս է հեղինակը։ Անաջողութեան սկզբնապատճառն այն է, որ պ. Մարութեանի տոնը չափազանց մեղմ է Աղա-Մէլիքի դերը խաղալու համար։ Այդ դերը թերևս աւելի սազէր պ. Աղաբաբեանին, որին, սակայն, անհասկանալի է թէ ինչ պատճառով, յանձնված էր Նադաշի դերը, որ շատ հեռու է այն բնագաւառից, որտեղ պ. Աղաբաբեանը կարող է պարզել իր բեմական անկասկած ուշագրաւ ընդունակութիւնները։

Տ. Աստղիկ-Երամեանի արտաքինը անհամապատասխան է Թանգիկի դերին։ Բացի այդ՝ դերի ներքինն էլ տիկինը չափազանց ծանրացնում է ու դժուարաշարժ դարձնում։

Շատ բնական և պարզ է Պօղոսի դերի մէջ պ. Յովհաննիսեանը, որի դերակատարութիւնը այս անգամ կարելի է օրինակելի համարել։

Տ. տ. Ցամիկ (Սէրվարդ), Հայկունի (Եսթեր) և Զաուշեան (Հասոմ) միանգամայն կոչման բարձրութեան վրա են։ Վերջինիս պակասում է առոգանութեան պարզութիւնը։

Ժամկոչ Կիւրեղի դերում պ. Պետրոսեանը յոյսեր է ներշնչում։

Գիւղացիները ընդհանուր առմամբ լաւ են, սակայն քանակով շատ քիչ են։

Ռեժիսօրական և բեմայարդարական մասը պատշաճ բարձրութեան վրա են։

Ա. Դալլաքօղեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ
Հրատարակիչ՝ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
([illegible], Վօրոնցովի արձանի հանդէպ)
Բաց է
Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ով և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ առ. 11—12 ժ.
Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. [illegible], վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—10—12 ժ. ներքին [illegible]
Մ. Գ. ԱՐԵՏԻՍԵԱՆ—12—1 ժ. [illegible] և վեներական (սիֆիլիս) հիւ.
Ե. Ա. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Դ. Ի. ՋԱՓԱՐԻՁԷ—10—11 ժ. ականջի, քթի և կոկորդի հիւ.։
Խ. Գ. ԱՐԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մասնագէտ երեխ. հիւ.
Վճարը 3 ր.։ [illegible]
Հիւանդանոցի վարչութիւն
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Մեդից. փելդշ. Ա. ԵՍԱՅԵԱՆԻ
Հիմնաւոր բժշկութիւն սուր և խրոնիքական տրիպերի, շանկրի, սիֆիլիսի (ներարկումն Էրլիխի նշանաւոր «914»-ի և «606»-ի հմուտ մասնագէտ բժշկի հետ) [illegible] թունաւորութեան, և այլ վեներական ցաւերի։ Նորագոյն մեթոդներ և էլեկտրականութիւն։ Կաշուի տակ [illegible], լուացումներ, վէրքի փաթաթումներ, բանկա կպցնել, ծաղկահատութիւն։ Մասսաժ ձեռքով և էլեկտրականութեամբ։ Վօրոնցովի արձանի մօտ Семеновская ул. № 9. Ընդունելութիւն ամեն օր՝ 4—6 ժամը ճաշից յետոյ։ Կանանց 6—7-ը։ 444 100—77

1918 թ. ընթացքում
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹ.
ԲԱՇԽՈՒՄ Է ԵՐԵՔ ՄՐՑԱՆԱԿ

ա) Յանուն տ. Մ. Մանթաշեանի՝ լաւագոյն ինքնուրոյն պիէսի համար 150 ր.։
բ) «Յօբելեանական» (ի յիշատակ ռուսահայ թատրոնի 50-ամեակի) լաւագոյն թարգմանական պիէսի համար՝ 100 ր.։
գ) Յանուն Ա. Մելիք Աղվազեանի՝ լաւագոյն, ոչ մի տեղ չը ներկայացված ինքնուրոյն պիէսի համար մօտ 150 ր.։

Հեղինակները և թարգմանիչները, եթէ ցանկանում են գաղտնի պահել իրանց անունը, կարող են կեղծանուն գրել պիէսների վրա, իսկական անուն-ազգանունը դնելով մի փակ ծրարի մէջ, որ կը բացվի միմիայն մրցանակաբաշխ յանձնաժողովի որոշումից յետոյ։

Այս տարի պիէսները ընդունվում են մինչև յունվարի 1-ը 1919 թ., որից յետոյ ստացված պիէսները քննութեան չեն առնվի։

Մրցանակի կարելի է ներկայացնել միմիայն նոր պիէսներ, այսինքն այնպիսի պիէսներ, որոնք հայ բեմի վրա դեռ չեն ներկայացված կամ առաջին անգամ ներկայացված են վերջին թատերաշրջանում (առաջին և երկրորդ մրցանակներ։

Մրցանակը կարող է յատկացվել լիովին կամ կիսով չափ, նայելով պիէսի գրական արժանաւորութիւններին։

Մրցանակի արժանացած պիէսի առաջին ներկայացման իրաւունքը պատկանում է Դրամատիկական Ընկերութեան և այդ ներկայացումների համար Խորհուրդը թարգմանիչներին ոչինչ չէ վճարում, իսկ ինքնուրոյն պիէսների հեղինակներին վճարում է [illegible] արդիւնքի 10%-ը։

Այդ իրաւունքը վերապահվում է Խորհրդին միայն մի տարվայ ընթացքում, սկսած պիէսի ստանալու օրից։

Պիէսները պէտք է ուղարկել հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Сололакская ул. № 20, Контора Армянскаго Драматическаго Общества. Արտասահմանից՝ Tiflis, rue Sololakskaja № 20, Société Arménienne Dramatique.

Ծանօթ.—Թարգմանական պիէսների հետ ներկայացնել նաև մի օրինակ բնագրից կամ այն օրինակից, որից թարգմանված է պիէսը։ Պիէսները պէտք է լինեն պարզ մաքուր գրված։ (ն. 5) 843. 2—2

Типографія "ЭКОНОМІЯ" Тифлисъ.